

Հայաստանի ամերիկյան համալսարան
Բակալավրի ուսումնական ծրագիր
Հաճախակի տրվող հարցեր

1. Ի՞նչ կոչումներ/աստիճաններ կառաջարկվեն:

- Բակալավրի աստիճան անգլերենի և հաղորդակցության ոլորտում
- Բակալավրի աստիճան գործարար կառավարման ոլորտում
- Բակալավրի աստիճան հաշվողական գիտության ոլորտում

2. Ո՞րքան է բակալավրի աստիճան տվող ուսումնական ծրագրերի տևողությունը/Ո՞րքան ժամանակ է պահանջվում բակալավրի աստիճան ստանալու համար:

ՀԱՀ բակալավրի աստիճան շնորհող ուսումնական ծրագրերը սովորաբար պահանջում են չորս տարի, որոնցից յուրաքանչյուրը ունի երկու սեմեստեր/կիսամյակ/ և 15 միավոր /5 դասընթաց/ յուրաքանչյուր սեմեստերի ընթացքում:

3. Ո՞րն է ուսուցման լեզուն:

ՀԱՀ-ում ուսուցման լեզուն անգլերենն է: Որոշ դասընթացներ, ինչպիսիք են Հայոց լեզուն և գրականությունը, ինչպես նաև Հայոց պատմությունը, կդասավանդվեն հայերեն լեզվով:

4. Ո՞րն է դիմումները ընդունելու վերջնաժամկետը:

Դիմումներն ընդունելու վերջնաժամկետն է 2013թ. ապրիլի 15-ը: Կա նաև դիմումների վաղ ներկայացման վերջնաժամկետ. այն 2013թ. մարտի 15-ն է:

5. Կա՞ արդյոք դիմումը ներկայացնելու համար վճար:

Այո: Դիմումը ներկայացնելու հետ պետք է վճարել 12,000 դրամ: Դիմումը վաղ, մինչև 2013թ. մարտի 15-ը ներկայացնելու դեպքում այդ վճարը կլինի 6,000 դրամ:

6. Ո՞րքան է ուսման վարձը?

Ուսման վարձը հետևյալն է:

- Գործարար կառավարում – տարեկան 1,200,000 դրամ
- Հաշվողական գիտություն – տարեկան 1,000,000
- Անգլերեն և հաղորդակցություն – տարեկան 1,000,000 դրամ

Արտասահմանյան երկրներից ուսանողների կրթաթոշակի գումարը դեռևս չի սահմանվել:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Բակալավրի ուսումնական ծրագիր
Հաճախակի տրվող հարցեր

7. Արդյո՞ք ՀԱՀ-ը տրամադրում է ֆինանսական օժանդակություն?

Այո: ՀԱՀ-ը նպատակ է հետապնդում առավելագույնս մատչելի դարձնել կրթությունը իր ուսանողներին: Ընդունելության որոշումներ կայացնելիս առաջնահերթությունը տրվում է գիտելիքներին, և եթե ուսանողը ունի ֆինանսական կարիքավորություն, ապա անպայմանորեն լուծումներ են գտնվում համապատասխան աջակցության համար: ՀԱՀ-ի քաղաքականությունն է՝ որակավորում ունեցող Հայաստանի ոչ մի քաղաքացի ֆինանսական պատճառով չի զրկվի ՀԱՀ-ում կրթություն ստանալու հնարավորությունից: ՀԱՀ-ը առաջարկում է ֆինանսական օժանդակության մի շարք հնարավորություններ, այդ թվում՝ ուսման վարձի աջակցություն, առաջադիմության և կարիքավորության վրա հիմնված կրթաթոշակներ, ինչպես նաև ուսման վարձի մաս-մաս վճարում: Ուսման վարձի և ֆինանսական օժանդակության վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք ՀԱՀ ինտերնետային կայք՝ www.aua.am կամ զանգահարեք 51 27 93:

8. Ո՞րոնք են ընդունելության պահանջները:

ՀԱՀ ընդունվելու դիմումի ձևը /դիմումի ձևերը առկա են էլեկտրոնային կերպով՝ www.aua.am կայքում կամ ՀԱՀ ընդունելության գրասենյակում /սենյակ #19, հեռ. 51 27 97, էլեկտրոնային փոստ: ugrad@aua.am/

Անգլերեն իմացության հավաստումը/ապացույցը – սովորաբար, TOEFL կամ IETLS քննության արդյունքը/միավորը կամ համարժեքը. համարժեքի կամ անգլերենը որպես մայրենի լեզու ունեցողների համար քննությունից ազատման հարցերով դիմեք ՀԱՀ ընդունելության գրասենյակ/:

Մաթեմատիկայի իմացության ապացույցը – սովորաբար, ՀԱՀ մաթեմատիկայի քննությունը կամ համարժեքը. համարժեք քննությունների վերաբերյալ հարցերով դիմեք ընդունելության գրասենյակ/:

Վերջերս նկարված անձնագրի նկար

Օրինական գործողության մեջ գտնվող անձնագրի կամ անձը հաստատող համարժեք փաստաթղթի պատճենը

Դիմումավճար -12,000 դրամ: Վաղ դիմումավճար – 6,000 դրամ:

Ավագ դպրոցը ավարտելու ապացույց, ներառյալ դիպլոմի պաշտոնական միջուկը – սովորաբար՝ ավագ դպրոցի դիպլոմը /ներկայացվում է ավագ դպրոցը ավարտելուց հետո՝ ընդունելության գործընթացը ավարտելիս/:

Դիմելու /ընդունելության/ գործընթացը կարող է ներառել հարցազրույցի անցկացում:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Բակալավրի ուսումնական ծրագիր
Հաճախակի տրվող հարցեր

9. Արդյո՞ք ՀԱՀ –ում ստացած աստիճանը ընդունվում/ճանաչվում է Հայաստանի սահմաններից դուրս:

Այո: Հայաստանի ամերիկյան համալսարանը հավատարմագրված է Դպրոցների և քոլեջների արևմտյան ընկերակցության ավագ դպրոցների և համալսարանների հավատարմագրող հանձնախմբի կողմից, հասցեն՝ **985 Ատլանտիկ Ավենյու, #100, Ալամեդա Կալիֆորնիա 94501, 510-748.9001**. ՀԱՀ աստիճանները ճանաչված են Հայաստանում, ԱՄՆ-ում և ամբողջ աշխարհում, այնպես ինչպես որևէ այլ ամերիկյան աստիճան:

10. Կարո՞ղ եմ դիմորդները դիմել որևէ մասնագիտացման:

Այո: Դիմորդները կարող են նշել մասնագիտություն ձեռք բերելու առաջին կամ երկրորդ առաջնահերթությունը դիմումի մեջ:

11. Քանի՞ դասընթաց է պահանջվում բակալավրի ծրագիրը ավարտելու համար:

Բակալավրի ծրագիրը ավարտելու համար պահանջվում են քառասուն դասընթացներ: Դասընթացների մոտ կեսը մասնագիտական են և մյուս կեսը՝ ընդհանուր կրթության կամ ընտրովի դասընթացներ են:

12. Ինչպե՞ս վարվել էթե դիմորդի անգլերենը բավարար լավ չէ:

Դիմորդները պետք է դիմեն ընդունելության գրասենյակ՝ խորհրդատվություն ստանալու թե որքան ժամանակ կպահանջվի բարելավելու անգլերենի մակարդակը՝ կախված իրենց իմացության մակարդակից:

13. Ինչպե՞ս վարվել էթե դիմորդի մաթեմատիկայի իմացությունը բավարար լավ չէ:

Դիմեք ընդունելության գրասենյակ՝ խորհրդատվություն ստանալու թե որքան ժամանակ կպահանջվի բարելավելու մաթեմատիկայի Ձեր իմացության մակարդակը՝ կախված իմացության մակարդակից:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Բակալավրի ուսումնական ծրագիր
Հաճախակի տրվող հարցեր

14. Ի՞նչ քննություններ են պահանջվում հանձնել ՀԱՀ ընդունվելու համար:

Անգլերեն իմացության հավաստումը/ապացույցը – սովորաբար, TOEFL կամ IETLS քննության միավորը / կամ համարժեքը – համարժեքի կամ մայրենի լեզու ունեցողների համար քննությունից ազատման հարցերով դիմեք ՀԱՀ ընդունելության գրասենյակ/:

Մաթեմատիկայի իմացության հավաստումը/ապացույցը – սովորաբար, ՀԱՀ մաթեմատիկայի քննությունը/ կամ համարժեքը – համարժեք քննությունների հետ կապված հարցերով դիմեք ընդունելության գրասենյակ/:

15. Ինչպե՞ս կարող են դիմորդները պատրաստվել անգլերեն լեզվի քննությանը:

Դիմորդները կարող են աշխատել իրենց անգլերեն իմացության բարելավման վրա ինչպես ինքնուրույն, այնպես էլ ՀԱՀ Հատուկ դասընթացների միջոցով, որը ունի դասընթացներ անգլերեն քննությանը նախապատրաստվելու համար:

16. Ունի՞ արդյո՞ք ՀԱՀ-ը ուսանողական հանրակացարան:

Ոչ: Ներկայումս ՀԱՀ-ը չունի ուսանողական հանրակացարան: Արտասահմանյան երկրների ուսանողները պետք է էլեկտրոնային փոստով պետք է գրեն ugrad@aua.am հասցեին տեղեկացնելու կացարանի իրենց կարիքների մասին և ստանալու տեղեկատվություն Երևանում բնակվելու համար առկա հնարավորությունների մասին:

17. Ինչպե՞ս է ձևավորվում դասախոսական կազմը :

ՀԱՀ-ը ունի միջազգային դասախոսական կազմ, որն ընդգրկում է արտասահմանում կրթություն ստացած կամ ուսուցանած դասախոսներ/պրոֆեսորներ Հայաստանից, ինչպես նաև շատ պրոֆեսորներ ԱՄՆ-ից և Եվրոպական երկրներից:

18. Կարի՞ք ունե՞մ վիզա ունենալու Հայաստանի Հանրապետություն ճամփորդելու համար:

Որպես կանոն, օտարերկրյա քաղաքացիները պետք է ունենան համապատասխան վիզա՝ Հայաստանի Հանրապետություն ճամփորդելու համար:

Օտարերկրյա քաղաքացիները պետք է ունենան օրինական գործողության մեջ գտնվող փաստաթղթեր Հայաստան մուտք գործելու համար: Յուրաքանչյուր անհատ պարտավոր է ժամանակին դիմել և ստանալ անձնագիր՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու համար համապատասխան վիզա ստանալու համար: Մեծ մասամբ օտարերկրյա քաղաքացիները կարող են վիզա ստանալ օդանավակայանում՝ ժամանելուն պես վճարելով **15,000** դրամ: Այս վիզան օրինական է մինչև 120 օր: Դուք կարող եք վիզա ստանալու դիմել Ձեր երկրում ՀՀ դեսպանատուն/հյուպատոսարան կամ օգտվել էլեկտրոնային ծառայությունից հետևյալ

**Հայաստանի ամերիկյան համալսարան
Բակալավրի ուսումնական ծրագիր
Հաճախակի տրվող հարցեր**

հասցեով՝ <http://www.armeniaforeignministry.am/eVisa/>. Արդեն Հայաստանում ՀԱՀ-ը կօգնի վիզան նորացնելու հարցում:

Առավել մանրամասն տեղեկությունների համար դիմել ՀՀ Արտաքին գործերի նախարարություն հետևյալ ինտերնետային կայքով՝ <http://mfa.am/en/visa/>

Հունիսի 18, 2012